- չի ավարտվել սեփականաշնորհման գործընթացը, թույլ է զարգացած ֆինանսավարկային համակարգը՝ բանկային կապիտալը իրականացնում է սահմանափակ ֆունկցիաներ, զարգացած չէ ֆոնդային բորսան,
- Ֆինանսական միջոցների պակասի պատճառով չեն ստեղծվել ֆինանսական մեխանիզմներ, որոնք կուղղորդեին ֆինանսական հոսքերը հումքային ոլորտից դեպի բարձր տեխնոլոգիաների ոլորտ,
- արժեզրկման դեմ պայքարի հետ կապված հիմնախնդիրները լուծված չեն,
- դեռևս առկա է բարձր դիրք գրավող չինովնիկների այս կամ այն կերպ ազդեցությունը առևտրային կազմակերպությունների վրա, հետևաբար մեծ չափերի հասնող կոռուպցիան,
- դեռևս զարգացած չէ շուկայական տնտեսության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը:

Նման պայմաններում մշակվող նորարարական զարգացման ռազմավարությունները կարծես կտրված լինեն իրականությունից և ներկայացվում են ընդհանրացված տեսքով:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ այսօր բավարար չէ միայն ունենալ զարգացած գիտություն, բազմաոլորտ արդյունաբերություն և կրթված հասարակություն, այլ կարևոր է թե այս կամ այն երկրի տնտեսական համակարգին որքանով է տրված «նորարարական մոտիվացիան», ունակությունը դինամիկորեն արձագանքելու շուկայում առաջացող պահանջարկին: Տնտեսությունը կարող է կոչվել նորարարական, եթե նրա բոլոր ոլորտներում՝ (հանքարդյունաբերող, վերամշակող, ագրարային, ծառայությունների ոլորտ և այլն) առկա է շարժունակություն, մրցակցություն, նոր շուկաներ որոնելու և գրավելու ունակություն:

Բացի դրանից նորարարական գործընթացը որպես նորույթի ստեղծման հետ կապված գործողությունների համախումբ, պետք է կրի իր մեջ գիտելիքներ այն միջավայրի մասին որտեղ նա ներդրվելու է: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է մարքեթինգ, արդյունաբերական, սոցիալական և բնապահպանական ստանդարտների համակարգ, հումանիտար տեխնոլոգիաների համալիր, այնպիսին ինչպիսին են կրթությունը, գովազդը և այլն: Այս դեպքում ապահովված կլինեն նորարարությունների իրականացման բնական պայմանները:

Այսպիսով նորարարական տնտեսության անցման պայմաններում անհրաժեշտ է, որ նորարարական տնտեսությանը բնորոշ ինստիտուտների կառուցման, վերջիններիս միջև փոխադարձ համագործակցության ռազմավարություններ, օրենքներ մշակելիս համապատասխան պետական մարմինները հաշվի առնեն նաև տնտեսական իրականության մեջ առկա վերը նշված խոչընդոտ հանդիսացող հիմնախնդիրները, որպեսզի հնարավոր լինի երկարաժամկետ հեռանկարում իրապես ձևավորել նորարարական տնտեսություն:

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼԸ

ՀՀ տնտեսության զարգացման վերջին տարիների դրական միտումները որոշակիորեն պայմանավորված են նաև ագրարային ոլորտի կայուն տնտեսական աճով: 2006թ.-ի համախառն արտադրանքը կազմել է 555.9 մլրդ. դրամ, ընդ որում բուսաբուծությունում այն կազմել է 356.3 մլրդ դրամ, անասնաբուծությունում՝ 199.6 մլրդ դրամ: Նկատելի է ցանքային տարածության նվազեցման միտում, այն 2006թ.-ին 2005թ. համեմատությամբ նվազել է 6.5%-ով, որն իր բացասական ազդեցությունն է թողել 1 հա-ի հաշվով համախառն արտադրանքի ցուցանիշի վրա: Վերջինս նվազել է 2.3%-ով, որը նկատելի է համարյա բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի, Շիրակի և Կոտայքի մարզերի:

*Աղյուսակ 1**

Համախառն արտադրանքի արժեքը 1 հա հաշվով, հազ.դրամ

Մարզը	2003	2004	2005
ք.Երևան	1884.0	2166.1	1966.7
Արագածոտն	582.6	706.5	805.0
Արարատ	1553.6	1866.8	1707.1
Արմավիր	1314.5	1577.4	1578.1
Գեղարքունիք	696.1	843.3	626.7
Լոռի	950.2	1199.1	990.7
Կոտայք	834.8	905.0	961.8
Շիրակ	502.6	615.0	673.4
Սյունիք	851.0	1073.9	1014.3
Վայոց Ձոր	828.8	948.3	819.7
Տավուշ	738.9	791.4	765.5
Ընդամենը ՀՀ	*820.2*	*1006.2*	*984.0*

*Այստեղ և հետագայում օգտագործվել են ՀՀ ԱՎԾ-ի 2003-2006թթ-ի տարեգրքերի տվյալները

Այս ոլորտը կազմում է ձևավորված շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգի մի մասը, որը ներառում է մոտ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության ոլորտի սպասարկման, գյուղմթերքների իրացման, վերամշակման մասնավոր ընկերություններ, որոնք 2006թ.-ի հունվարի 1-ի դրությամբ տնօրինում են վարելահողի 74.5%-ը, բազմամյա տնկարքների՝ 56.0%-ը, խոտհարքների՝ 43.3%-ը:

Տնտեսվարման նոր պայմաններում փոխվել է հողօգտագործման փոխհարաբերությունները: Ըստ աղյուսակ 2-ի ցուցանիշների տնտեսությունների թիվն աճել է ավելի բարձր տեմպերով, քան մասնավորեցված հողակտորների տարածությունները, որոնք շատ փոքր հողակտորներ են և հնարավոր չէ արդյունավետ օգտագործել արտադրության միջոցները և աշխատանքային ռեսուրսները: Հողակտորների խոշորացումը կոոպերացիայի՝ հողի համատեղ մշակման միջոցով, թույլ կտա ավելի արդյունավետ օգտագործել սպառվող ռեսուրսները և կապահովի բնակավայրերի ամրապնդում, որն էլ տարածքային զարգացման նախադրյալներից է:

Աղյուսակ 2.

Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների քանակը և գյուղատնտեսական հողատեսքերը

	1996	2003	2004	2005	2006
Տնտեսությունների թիվը	316774	334798	338037	338603	339276
Գյուղատնտեսական հողատեսքեր, հազ.հա	452.7	471.9	480.3	484.4	485.6
այդ թվում՝					
վարելահող	319.7	365.2	370.3	366.9	375.3
Բազամյա տնկարկներ	50.9	35.7	37.3	37.3	37.2
Խոտհարք	82.1	62.8	62.8	62.6	62.3
Արոտավայր	-	-	9.9	10.8	10.8

Չնայած վերջին տարիներին Հայաստանի գյուղատնտեսությունում գրանցվել է տնտեսական աճ, սակայն ագրարային ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմնականում կապված են արտադրական ենթակառուցվածքների անկատարության և եղածի անարդյունավետ օգտագործման, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների կարգավորման ոչ կատարյալ մեխանիզմների առկայության հետ:

Այսպես, 1996-2006թթ.-ին նվազել են գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության ավանդաբար զարգացած գինեգործությունը՝ 43.3%-ով, պահածոյացված պտղի արտադրությունը՝ 35.7%-ով, որը պայմանավորված է ձեռնարկությունների տեխնիկական անբավարար զինվածության, ներքին շուկայում պահանջարկի նվազման և արտահանման դժվարությունների հետ:

Սննդի արդյունաբերության վերամշակման սուբյեկտների կազմակերպման ուղղության և տեղաբաշխման ճիշտ ընտրությունը կնպաստի գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրների լուծմանը և տարածաշրջանների համագործակցությանը:

Սեփականության և տնտեսվարման բազմաձևությունը, ապրանքների և ծառայությունների գների ազատականացումը պետական աջակցության սահմանափակության պայմաններում, առավել ցայտուն է դարձնում առանձին տարածաշրջանների և արտադրող սուբյեկտների իրական մրցակցային հնարավորությունները: Տարբեր գյուղատնտեսական գոտիներում գոյություն ունի բնական և արտադրական պայմանների տարբերություն և կան գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունների բացարձակ անհավասարություն:

Ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում ՀՀ տարածքում արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխումը և տարածաշրջանի համաչափ զարգացումը եղել և մնում է որպես պետական կարգավորման ամենադժվարին հիմնահարցերից մեկը: Ներկայումս Հայաստանում տնտեսական աճի կենտրոնացման միտումներ են դրսևորվում: Ներդրումները առավելապես կենտրոնացված են Երևանում և քաղաքամերձ տարածաշրջաններում, քանի որ արտադրության գործոնները հասանելի են և արդյունավետ: Հեռավոր մարզերում նկատվում է հակառակ երևույթը, որի հետևանքով բարձր է բնակչության աղքատության և արտադրական ներուժի օգտագործման հնարավորությունները: Ընդ որում, լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում վերամշակման սուբյեկտների ստեղծմանը և զարգացմանը խանգարում են իրար հետ փոխկապակցված ենթակառուցվածքների անկատարությունը:

Վերը նշվածի մասին է վկայում գծապատկեր 1-ը:

Այսպես, օրինակ, տեղերում խաղողի, պտղի, բանջարեղենի, կաթի վերամշակման ծավալները ցածր են, ընդ որում Արարատի մարզում արտադրված 65.7 հազ.տ. հումքից վերամշակվել է 96.2%-ը, իսկ Արմավիրում՝ 72.6 հազ տոննայի դիմաց՝ 27.1%, իսկ Երևանում՝ 1.9 հազ տոննայի դիմաց վերամշակվել է 2.7 անգամ ավելի:

Նույն պատկերն է գրանցվել պտղի և կաթի վերամշակման ոլորտներում:

Ագրոարդյունաբերական համակարգի, այդ թվում գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության և գյուղական տարածքների զարգացման փոխկապակցվածությունը ապահովելով վերամշակվող արտադրանքի ծավալների աճ, կնպաստի տարածքային զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

Այս իրավիճակում կարգավորիչ դեր կարող է կատարել պետական հովանավորչությունը, մասնավորապես պետության կողմից գյուղատնտեսության ոլորտի սուբսիդավորումը, որն ուղղված կլինի ճյուղի գերակա ուղղությունների և ոլորտի արտադրական ենթակառուցվածքների և գյուղատնտեսության սոցիալական զարգացման խթանմանը: Այստեղ խնդիրը կայանում է հիմնավորված սուբսիդավորման անհրաժեշտությանը, ուղղություններին և դրանցից ակնկալվող արդյունքներին:









Գծանկար 1. Խաղողի, պտղի, բանջարեղենի, կաթի արտադրության և վերամշակման ծավալները 2005 թվականին՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի

Սուբսիդավորումը պետք է ուղղված լինի՝

- գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների համալրմանը, որը կօգնի գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջարկի խթանմանը՝ բարձրացնելով գյուղմթերքների բերքատվությունը,
- չօգտագործվող և ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող վարելահողերի տարածքների կրճատմանը,
- հողային և աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացմանը,
- սննդի, վերամշակող արդյունաբերության հումքային բազայի և արտադրության ծավալի կայունացմանը, որը կնպաստի հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը,
- նախընտրելի մասնագիտությունների ձևավորմանը և շուկայի պահանջներին համապատասխան արտադրության ծավալների կարգավորմանը:

Սուբսիդավորման գործընթացի իրականացումը պահանջում է գործուն մեխանիզմների կիրառում, քանի որ այն առնչվում է գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների հետ, որոնք ունեն տարբեր մասնագիտացումներ և արտադրում են բազմազան գյուղատնտեսական մթերքներ:

Հաշվի առնելով ագրովերամշակման արտադրանքների շուկայական պահանջարկը և մրցունակությունը, անհրաժեշտ հումքային բազայի առկայության դեպքում, կարելի է ճիշտ որոշել վերամշակվող սուբյեկտների ուղղվածությունը և տեղաբաշխումը: Այն կլուծի մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- ներքին շուկան տեղական արտադրանքի բարձրորակ և մրցունակ պարենամթերքով ապահովումը,
- տեղական հումքի արդյունավետ օգտագործումը,
- տարածաշրջանների միջև գոյություն ունեցող անհամաչափությունների հաղթահարում և տնտեսավարման համագործակցության զարգացում:

Երկրի տնտեսության՝ այդ թվում ագրոարդյունաբերական համակարգի հետագա զարգացման համար կարևորվում է տարածաշրջանային զարգացման անհրաժեշտ համամասնությունների պահպանումը:

ՀՀ տարածաշրջանների տնտեսական զարգացման մակարդակի միջև առաջացած անհամամասնությունների հաղթահարման համար անհրաժեշտ է.

- ավանդական հատվածների վերականգնում և զարգացում մինչև տնտեսական նոր հատվածի առաջացումը,
- անհրաժեշտ պայմանների ստեղծում թույլ զարգացած տարածաշրջանների առաջանցիկ տեմպերով զարգացման համար,
- մասնավոր հատվածի համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում և ներդրումային դաշտի բարելավում,
- սահմանամերձ գոտու բնակավայրերի ամրապնդում,
- լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի և թույլ յուրացված տարածքների զարգացման հնարավորություն:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հանրապետությունում սոցիալ – տնտեսական դժվարությունների աստիճանաբար հաղթահարումը պայմաններ ստեղծեց անցումային փուլում մշակել որոշակի քաղաքականություն և իրականացնել գործնական միջոցառումներ՝ գյուղատնտեսությունը ծանր վիճակից դուրս բերելու համար: Նոր պայմաններին համապատասխան, ընդունվեցին մի շարք օրենքներ, մշակվեցին և գործողության մեջ դրվեցին տնտեսական հարաբերությունները կարգավորող մեխանիզմներ, զգալիորեն աճեց կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը, մեծացան պետական բյուջեից կատարվող հատկացումները, վերագործարկվեցին ու զարգացում ստացան գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկությունները և այլն, որոնց շնորհիվ զարգացման միտումներ ձեռք բերեց գյուղատնտեսական արտադրությունը, որը պայմանավորված է գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացման մակարդակով:

1. **Բուսաբուծության զարգացումը.** Շարադրելով գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացմանը վերաբերվող մեր մտորումները, տեղին է նշել, որ բուսաբուծությունում գլխավոր հիմնահարց է **հացահատիկային տնտեսության** կազմակերպումը: Հացահատիկը հիմնականում մշակվում է Շիրակի և Գեղարքունիքի (21%) ու Սյունիքի (11%) մարզերում: Ի տարբերություն մյուս ճյուղերի, հացահատիկի արտադրությունը չի կենտրոնացված նրա զարգացման համար համեմատաբար բարենպաստ պայմաններ ունեցող գոտիներում, այլ տեղաբաշխված է հանրապետության ամբողջ տարածքում: Գյուղացուն ավելի հեշտ է մշակել հացահատիկ, որի համար ինչպես աշխատանքային, այնպես էլ նյութական ծախսերը մնացած մշակաբույսերի հետ համեմատած, ավելի փոքր են:

Հացահատիկը էժան կերասննդի ստացման աղբյուր է հանդիսանում, իսկ հացի ու հացահատիկի միջին կալորիականությունը կազմում է շուրջ 1800-2200 կալորիա, ալյուրինը՝ մինչև 3000, որը հավասարվում է տավարի մսի կալորիականությանը: Հացահատիկը բարձրարժեք կեր է նաև կենդանիների համար: Հիշենք, որ կերային արժեքը չափվում է կերամիավորներով, իսկ մեկ կերամիավորը հավասար է 1 կգ վարսակի ալյուրից ստացված էներգետիկ արժեքին: Հացահատիկը, որն ունի ամենամեծ ռազմավարական նշանակությունն ամբողջ աշխար-